


ՄԱՍԻՎ ԱՂԱԴԻՆԻ

Ա.Ի.Ե.Տ.Ա.Բ.Ե.Ր

Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ե Ա Յ Յ

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՎԻՃԱԿԻՍ ՀԱՅՈՅ ՆԱԽԻԶԵՒԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱՊԻՈՅ



ԱՏԵԽԱԿՈՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ. — (Մարտի 2.)

Պաջնորդական Ատեանս իմանալով որ Քիչվի մօտերը Ուման քաղաքին երկրագործական գպլոցին մէջ երկու թիֆլիզեցի հայ երիտասարդներ կան, նմանապէս Քերսոնի գաւառին մէջ իշարասուցի զինուորական մը, պէտք եղած կարդագրութիւնն ըրաւ որ նոքա եւ այնպիսի ցրուեալ ազգայինք գոնէ տարին մէկ անդամ արժանանան խորհրդոյ խոստո-

վանութեան եւ հաղորդութեան։ Կմնայ որ վիճակիս ուրիշ հեռաւոր քաղաքներն ու գեղերն ալ եթէ կան մերազնեայ հաւատացեալք՝ անհոգ չլինին իմաց տալու իրենց մերձաւոր հայաբնակ քաղաքի քահանային կամ թէ ուղղակի Առաջնորդական Ատենիս, որպէս զի եւ սա իւր պարտքը կարողանայ կատարել՝ քահանայ հասցընելով առ նոսա :

Մարտի 5. — Սիմֆերոպոլի ժողովրդականք օրինաւոր ժողովով ընտրեցին իրենց եկեղե-

ցւոյն երէցփոխան զմեծարոյ Սիմոն Աղայն թղլըեան իտեղի Խանձեան Լուսեղէն Աղային՝ որ իւր հրաժարականը տուեր էր. եւ Առաջնորդական Ատեանս յօժարակամ սիրով հաստատեց այն ընտրութիւնը :

Մարտի 29. — Վեհափառ Կաթուղիկոսին կողմանէ Վիճակիս հոգեւորական գործոցը համար զնիչ կամ այցելու յուղարկուած

լինելով Սրբազն Եպիսկոպոսն Մնդրէաս, Հրամայուեցաւ Հոգեւոր Կառավարութեանց եւ Քահանայից Վիճակիս որ արժանաւոր մեծարանօք ընդունին ամէն տեղ զՄրբազն Զնիչն, ընելու հարցմունքներուն ամենայն Ճշգութեամբ եւ օրինաւոր արդարութեամբ պատասխանեն, եւ եկեղեցիները՝ հանդերձ անոնց մէջի սպասներովը ցուցընեն :

ՆՈՂԱՅՍՔ ՔԱՂԱՔԻ ՄԵԶ ԲՆԱԿՈՂ.

ՀԱՅՈՅ

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ԵՌԱՆԴԱ

Նողայաք կամ Ապիթօշնա քաղաքին մերազնեայ ժողովուրդը թէպէտեւ սակաւաւոր է թուով, բայց գովելի ու նախանձելի միաբանութիւն ունին իրենց մէջ. որով կարող են իրենց պիտոյքը աւելի դիւրաւ հոգալ ու պատրաստել՝ քան թէ ուրիշ բազմաթիւ բայց երկառակ տեղերու բնակիչները։ Ասոր մէկ ապացոյցն ալ այն է որ այս քանի մի տարուանս մէջ ոչ միայն իրենց փոքրիկ եկեղեցին պայծառացուցին, այլ եւ ժողովը դական դպրոց բացին եւ յառաջադիմութեանը աշխատեցան։ Այժմ այն դպրոցին հաստատութեանն ալ մեծ փոյթ ունենալով՝ այսպիսի գեղեցիկ խորհուրդ մը ըրեր եւ ի գործ դնել սկսեր են։ Անցած տարի մայիսի 1-ին իրենց գլխաւորներուն առաջարկութեամբ տասնընը հոգի հաւաքեր են մէջերնին հինգ հինգ բուլութիւնը 95 բուլ.

արծաթ. այն դրամը շահեցընելով դարձեալ իրենց մէջ, այս տարի մինչեւ մայիսի 1 հաշուելով՝ հասուցեր են 150 արծաթի։ Եւ այս կերպով որոշած են այն գումարը բանեցընել մինչեւ տասը տարի, ու հաւաքուած դրամագլուխը ապահով տեղ մը գնել, այսինքն տէրութեան դրամատուններէն մէկը, որպէս զի անոր տարեկան շահովը իրենց դպրոցը պահպանեն եւ ըստ կարելոյն պայծառացընեն։

Այս իրենց ազգասիրական եւ ճշմարտապէս բարեպաշտական խորհրդոյն ու ձեռնարկութեանը համար, Գերապատիւ Առաջնորդէն այս օրերս ընդունեցան օրհնութեան եւ քաջալերութան նամակ. յուսամբ թէ ուրիշ մերազնեայք եւս իրենց գովասանքն ու թերեւս նպաստն ալ չխնայեն այնպիսի նախանձելի գործոյ համար։